

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա -ՆԶՊ և ԱԿ

Մասնակից – ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ՄԱՐՏԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ղեկավար – ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ԱՐՏԱԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Թեմա – ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՈՏ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԴՐԱԿԱՆ , ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

## ԵՐԵՎԱՆ 2022

## Բովանդակություն

1. Ներածություն----- էջ 3
2. Ռազմարվեստի պատմության ազդող գաղափարաճանաչության դրական եվ բացասական երեվույթները----- էջ 5
3. Ռազմահայրենասիրական դասընթացների արդյունքներ----- էջ 9
4. Հայաստանի հանրապետության կառավարություն որոշում----- էջ 10
5. Նորակոչիկների իմացությունը Մրիության դասեր՝ ուսումնասիրելու ժամանակ-----  
----- էջ 11
6. ՆԶՊ համակարգի շրջանակներում արժեքավոր գործոնները----- էջ 14
7. Ավագ դպրոցում նախնական զինվորական պատրաստության դասավանդման հիմնական մեթոդները----- էջ 16
8. Զինվորական ծառայության հիմունքների ուսուցման մեթոդները և նախնական ռազմական վարժություն----- էջ 18
9. Մարտավարության կրակային առանձնահատկություններին ազդող գործոնները ---  
----- էջ 20
10. Եզրակացություններ եվ առաջարկություններ ----- էջ 23

**ԱՆԳԱՍ ՊԱՐՏՎԱԾ ԹՇՆԱՄՈՒՏ ՀԵՏ ՎԱՐՎԻՐ ՄԻԱՅՆ ԱՄՊԵՏՈՐԵՆ -----ԳԱՐԵԳԻՆ ՆՏԴԵՀ**

**Ներածություն**

Մինչև ավագ դպրոց տեղափոխվելը աշակերտներն արդեն պատկերացում ունեն ՀՀ Ջինված Ուժերի խնդիրների ու կառուցվածքին: ՀՀ Պետական խորհրդանիշների, գործամասերի մարտական դրոշի մասին: Ծանոթացել են հայ զինվորական վարքականոսներին:

Ուսումնական, հատկապես ավագ դպրոցներում Նախնական Ջինվորական Պատրաստության „ՆԶՊ“, առարկայի դասավանդումը կազմակերպվում է „զինապարտության մասիս օրենքի հիման վրա,,:

ՆԶՊ առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է պատրաստել հայրենիքը պաշտպանելու պատրաստ բազմակողմանի զարգացած պատանիներ ու աղջիկներ, հնարավորություն ընձեռել պատանիներին բանակ գորակոչելու, հետո կարճ ժամանակում տիրապետել ժամանակակից զենքին ու ռազմական տեխնիկային, որը համարվում է ՋՈՒ ծառայության կազմակերպման համակարգի բաղկացուցիչ մաս: Հայրենիքի պաշտպանությունը ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է:

Խնդիրներն ու նպատակները՝

Ա. Ազգային բանակում ծառայելու գիտակցումը

Բ. Երթման պահանջների անվերապահ կատարման պատրաստակամություն, որպես հայրենասիրության բարձր չափանիշ, որի նպատակն է կարճ շամանակահատվածում կողմնորոշում, հմտությունների զարգացում, թեմայի ուսուցումը կանոնակարգված, պլանավորված կանխամտածվածությամբ: Նրա իրադարձությունները, ուսումնական գործունեությունը վերահաստատության գնահատումով, որի գործնթացը բաղկացած է երկկողմանի դասավանդումից, արդյունքը կախված է օբեկտիվ և սուբեկտիվ գործոններից:

ՆԶՊ առարկայի կրթական համակարգում իրականացվում է համակարգված և համակցված գործունեություն, ուղղված նորարական խորքային դասաթեմաների լիարժեք դասավանդումը:

Յուրաքանչյուր առարկան քննարկել կամ վիճաբանելու ասոցիացիայում կազմված աշխատանքային պլանը հստակ կառույց է, որը թույլ է տալիս ռազմագիտության և այլ առարկաների հետ համագործակցելու, փոխգործակցության միջոցով նյութի սպասարկումը հասցնել ճիշտ ըմբռնման,

պրակտիկ ինչպես նաև թեմատիկ ճիշտ մոտեցմանը: Հաղթահարել արհեստական խթան հանդիսացող հանգամանքները:

Հետևել յուրացման և զարգացման արդյունքների հեռանկարների ըմբռմանը: Հետևողական աշխատանքներով ՆԶՊ առարկայի կարևորությունը լինի ուշադրության կենտրոնում: ՆԶՊ և նույնպես մասնագիտություն է և յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է խորությամբ յուրացնել այն, խորացնել գիտելիքները մարտավարության հիմունքների, Հայոց պատմության տարեթվերի, հաղթական ճակատամարտերի շարքերը: Նոր գիտելիքների փեռքերումով հայրենիքի հանդեպ մեր պարբերի կատարմանը պատրաստ լինելու համար:

ՆԶՊ առարկան ուսումնասիրելուց հետո աշակերտը պատրաստ կլինի ծառայելու հայոց ազգային բանակում: Կնդունվեն ռազմահայրենասիրական հաստատություններ:

Գիտակցությունը բնության կողմից տրված հարստություն է: Մարդը բնության դեմ փոքր, բայց հսկա է դաստիարակույուն մեջ: Այն սկսում է սիրո դաշտից, որը ինքնաբուխ զգացմունք է: Այն ծնվում է ակամա, բուն դնում յուրաքանչյուրի մեջ: Մերը մարդկության նախահիմքն է, բնության լավագույն բարգևը: Երեխաների մեջ սերը մագրություն ու անմեղության խորհրդանիշ է: Սիրո չարաճճությունները աշակերտի փայլող աչքերից ուրախությունը անջատելը նման է հանցագործության: Ամեն մի լավ կամ, վատ արարք դաճում է երեխաների ուղեղում, մնում նրանց հիշողության մեջ: Այն արտահայտվում է նրա կյանքի ընթացքում հերթաքան կամ այլ առիթների ժամանակ:

### **Նպատակները –**

Կարճ ժամանակահատվածում, կողմնորոշում, հմտությունների զարգացում:

**Թեմայի ուսուցումը՝** կանոնակարգված, պլանավորված և կանխամտածված է: Նրա իրադարձությունները, ուսուցման գործունեությունը, վերահաստատության գնահատումը:

Ուսուցման գործնթացը բաղկացած է երկկողմանի դասավանդումից, որի արդյունքը կախված է օբեկտիվ և սուբեկտիվ գործոններից: Իմացության գործնթացը, ուշադրություն մարդու հոգեկան ակտիվության ուղղվածությունը դեպի որոշակի առարկաների և երևույթների նկատմամբ, նրա ընկալումը և աշխատասիրության ըմբռնումը:

Աշակերտը ունի լսողություն, և նյութը օրինակներով կարողանում էս հետաքրքիր մտնուլորտ ստեղծել: Դասարանի ուշադրությունը բուն նյութի բովանդակության նկատմամբ արժևորվում է և լինում հարագլի:

Հարկավոր է ընդունել, որ յուրաքանչյուր դասաժամ ունի իր բովանդակությունը, հետաքրքրությունը և արժեքը: Պարզապես մատուցման և ներկայացման ձևերն են տարբեր: Այն պահանջում է վարպետություն, հմտություն, իմաստալի սպասարկում: Միաժամանակ հասնել այն բանի, որ աշակերտը թողնի, անջատվի ավելնորդ հրապուրիչ կամ խափուսիկ երազական մտքերից, կենտրոնանա բուն թեմայի շուրջը: Քաղցրության ու ջանասիրության ուսումնասիրի նյութը: Անգամ մեկի նկատմամբ պահանջվում է տասել հատուկ հարգանք: Մինչ դասաժամի սկսվելը նյութի նախապատրաստման մանրամասները ճշգրտելը ու յուրահատուկ անկար պատրաստել դեպի նյութը: Հիշեով, որ յուրաքանչյուր աշակերտի մեջ ներքուստ կա ինչոր թաքնված անհանգստություն: Հարկավոր է վարպետորեն, խելացի ու ճարպկորեն հմուտորեն ամեն ինչ անել այնպես, որ ակամա զարմանքից խիզախեն: Մխալների վրա սովորեն, և սովորեցնել ինչպես կարելի է վերացնել թերությունը: Աշակերտը գիտելիքի իմացությամբ ունի կողմնորոշվելու հատկություն: Վատ դաստիարակությունից, գիտելիքի պակասությունից ձևավորվող դասաթեմաների ուժեղների մոտ որպես թույլը դառնում է համեղ

ընթրիք:

Անհատը կյանքում տանը, թե հասարակուցյան մեջ և ամենուր գտնվում է շփման մեջ: Աշակերտը նույնպես, որպես ներկայացուցիչ դպրոցում շփվելով շրջապատի հետ, սնվելու կամ հագնվելու, իրերի հետ հարաբերվելու ժամանակ գործի բնույթով տարբեր են, բովանդակությամբ նույնպես: Աշակերտի ուսուցողական տարիների ժամանակը բավարար է դասաժամին հետևել յուրացնելու բազմաբնույթ իմացություն ձեռք բերելու համար:

Հետևել տարվա բոլոր եղանակներին, տրամադրվել զարունը, որպես անգուգական հրաշակերտն է բնության, ամառը մրգգաշատ, աշունը ոսկեհեր, ձմեռը ճերմակ ու մագուր է ներդաշնակությանը: Հետևել միաձուլմանը թույլ դասաժամից խույս տալ նյութի ոչ ճիշտ բացատրությունից, անհետաքրքիր բառերի կույտի շարադրանքից: Անհավանական կերպարների ներկայացման ազդանշաններից, որը աշակերտին հրում է ենթագիտակցության հորձանոթը: Որտեղ ոլորապտույտ ինչպես նաև հավասարապես գոյակցում են իրական և հավանական կերպարները:

Այստեղ ենթագիտակցությունը փորձում է մոլորացնել աշակերտին նրան անջատելով գիտակցության պատասխանատվությունից. առաջացնելով անգիտակիցելու աղմուկ: Նրան հրելով թմրացնող երազներ իրացնելուկանացնելու հավանականությանը: Այստեղից կազմել հետևություն, աշակերտին իրազեկ պահել շաբաթական թեմատիկ պլանը: Տեղեկացնել, որ դպրոցում (Ռազմագիտության ՆԶՊ) առարկայի դասավանդումը հիմնական փասթաթուխտ է: Այն մշակված է

ըստ ծրագրում տրված բաժինների և թեմաների նպատակային հաջորդական ուսումնասիրմանը: Ինչպես նաև ներառարկայական և միջառարկայական կապի վրա:

ա. Հիմք ընդունելով այն փասթը, որ շաբափական պլանի կազման գործընթացը ցտեղծագործական ախատանք է: Յուրաքանչյուր զինդեկ պետք է ցուցաբերի յուրովի մոտեցում՝ ելնելով անձնական փորձից: Եվ ավելին, որ նա մասնակցել է մարտական գործողություններին:

բ. Ելնելով տեղային պայմաններից հնարավոր է մասնակի փոփոխություններ՝ պահմանելով տրամաբանական հաջորդականությունը: Տարածքային զինկոմիսարիատի տիպային պլանը մշակվում է օգոստոսյան հավաքների ժամանակ: Միատիպ պլանը օժանդակում է մեթոդական օգնություն ցույց տալու, վերհսկելու և ստուգելու զինդեկի աշխատանքները:

**ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**  
ՆԶՊ առարկայի դասընթացը բաղկացած է իննը թեմաներից, իրարից անկախ բաժիններից՝ ՀՀԶՈԻ և ռազմարվեստի պատմություն, մարտավարության հիմունքները, կրակային պատրաստություն. Համագորային կանոնադրություններ, շարային պատրաստություն, ռազմական տեղագրություն, անվտանգ կենսագործունեություն, առաջին բուժօգնություն: Ուսումնասիրելով այս դասընթացները աշակերտները ձեռք են բերում ռազմական տեսական գիտելիքներ:

//Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռք բերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, սովորողների զարգացմանն ուղղված գործողությունների առաջնայնությունը, ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային ծրագրում դրանց արտացոլումը, իրականացման արդյունավետությունը ռազմահայրենասիրական թեմաների սպասարկման աշխատանքային մեթոդները, նրանց միջոցով կզարգանա համարձակություն, տոկունություն, բարոյահոգեբանության կայունություն:

2019-2020 ուստարում իրականացվել է չափորոշիչահեն ուսուցում՝ համաձայն ուսպլանի: Տարեսկզբին ուսուցիչներն ապահովվել են առարկայական ծրագրերով, հաստատվել են առարկայական թեմատիկ ծրագրերը, տրվել են ուսումնաօժանդակ նյութեր, աշակերտներն ապահովվել են դասագրքերով: ՆԶՊ առարկայի ուսումնամեթոդական, ներդպրոցական և համադպրոցական աշխատանքներն

իրականացվել են սահմանված ժամկետում, ուսման որակի ապահովման նպատակով վերահսկողություն է սահմանվել առարկայական դրվածքի ուսումնասիրմամբ, դասալսումների իրականացմամբ, տնօրենության կողմից համադպրոցական թեմատիկ գրավոր աշխատանքների անցկացմամբ, իրականացվել է մշտադիտարկում բոլոր դասարաններում, դասերը հազեցված են եղել զննական, դիդակտիկ պարագաներով, կիրառվել են S2S միջոցներ, լաբորատոր և գործնական աշխատանքներն անցկացվել են լաբորատորիայում, Ձմեռային պայմաններում դասերն անցկացվել են դպրոցի մարզադահլիճում: Ավագ դասարանի աշակերտների ուսումնական գործընթացը կազմակերպվել է համաձայն շաբաթական և տարեկան ուսպլանի պահանջների: Աշակերտների արժեհամակարգի ձևավորման նպատակով իրականացվել են հետազոտական աշխատանքներ, խաղմրցույթներ, հրապարակային դասեր, միջոցառումներ, ինքնավարության օր, հայրենասիրությանը նվիրված դասեր ու միջոցա-ռումներ, արտադպրոցական միջոցա-ռումներ և այցեր, վիրտուալ այցեր մշակութային օջախներ, վարպետաց դասեր, բանավեճի ակումբ, ճանաչողական էքսկուրսիաներ, ազգային տոնակատարություններ: Սովորողների մեջ ձևավորել ռազմահայրենասիրական կարողություններ, հպարտություններ, կամային բարձր հատկանիշներ, առաջին բուժօգնություն, ինքնօգնություն, փոխօգնություն ցուցաբերելով առնականություն:

Եվ իրոք, պարապունքների ժամանակ մշտապես խոսում է անհաջողության, թերությունների մասին, ասելով որ նյութի լավ չուսումնասիրելու դեպքում շուրթեն մտածելը անհաջողակ է լինում: Բանն այն է, որ աշակերտի մտքերը ազդում են տրամադրության վրա, դա էլ իր հերթին թեմայի յուրացման վրա: Այսինքն կատարվաշ սխալ ընդունելը աշակերտի կողմից արդեն սխրագործություն է: Այսինքն կյանքի տառապանքը չեն ժառանգում, այն ստեղծվում է ծուլությունից:

## **ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

### **ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՅԱՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ**

Հիշենք մեր գորավար Գարեգին Նժդեհի խոսքերը այն մասին, որ վաղկոտ ժողովուրդները պատերազմից տուժում են առավել շատ և, որ հայրենասիրության հետ բարձրանում են ազգերը, ընկնում նրա պակասի հետ: Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում դաստիարակություն, կրթություն, ազգային գիտակցություն, համամարդկային արժեքներ, դաստիարակչական համակարգ, ավանդական միջոցներ, տարիքային գործոն, միջանձնային հարաբերություններ, զինդեկ, դասդեկ: «Արժեհամակարգ» հասկացությունը

մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին.

ՆՁՊ -ի դասավանդման շրջանակներում մեթոդների ընտրության ժամանակ հարկ է հաշվի առնել հետևյալ գործոնները՝

- 1 ՆՁՊ -ի ուսուցման նպատակները , խնդիրները, և բովանդակությունը
- 2 Ուսումնական նյութի ծավալը և բարդությունը
- 3 Ուսուցման նյութի ըմտրությունը և համապատասխանեցումը կրթության
- 4 Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կարողություններին
- 5 սովորողների պատրաստվածության մակարդակը
- 6 ուսումնական ժամաքանակը
- 7 սովորողների տարիքային և անհատական և առանձնահատկությունները
- 8 ուսուցման կազմակերպման պայմանները
- 9 ուսուսիչ -աշակերտ հարաբերությունները

Դիրքորոշումներ և արժեքներ բնորոշելու կարևորությունը՝ մաքառելն է, պայքարելը: Աշակերտներին չճանրաբեռնել թվային արժեքներով, անիմաստ մտքերով: Այնտեղ որտեղ անտեսվում է արժեք համակարգը ցանկացած բնագավառ թուլանում է, հատկապես կրթության ոլորտը , օրենքն ու կարգապահությունը չի գործում անուղղակի , աշակերտների մեջ խաթարվում է դաստիարակել սերմանելով արժեքների համակարգը:

Անհրաժեշտ պատասխանատվության օրինական ձևը արժեքների համակարգի նկատմամբ , որպեսզի բողոր ժամանակներում լինի արժեքավոր նպատակները:

Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև գուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների



ձևավորման առումով չափազանց մեծ է ռազմագիտության ուսումնական առարկայի դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է ՆԶՊ-ի դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Ասենք, որ բոլոր առարկաները կարևոր են և լավ, բայց ռազմագիտությունը առավել է և անվտանգ: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և

հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կադապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» [3, 64]: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը մի- – 398 – ջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդամին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման

դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք հայոց լեզուն Մ. Մաշտոց, Մ. Խորենացի, Նարեկացի, Թումանյան որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ: Հայ գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև ռազմագիտության ուսուցիչ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը ՆԶՊ-ին, որպես առաջնային պաշտպանական գիտություն: Արժեքների բուրգի գազաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար հայ գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, դիցուք, հիշատակել Ավարայրի ճակատամարտը այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնագոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի հատկապես նրանք օվքեր մասնակցել են Արցախյան պատերազմին որոշակի հեղինակություն կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր

մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասողեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ

նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» [6, 65]: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

## **ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ՝ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ**

Նախնական զինվորական պատրաստությունն ընդհանուր առմամբ միտված է երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, հատկապես նախագորակոչային տարիքի պատանիների զինվորական ծառայության նախապատրաստմանը: Մենք արդեն ներկայացրել ենք ոլորտին առնչվող մի շարք խնդիրներ և միջոցառումներ, որոնց անհետաձգելի լուծումն ու բարելավումը կնպաստի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման որակի և արդյունավետության բարձրացմանը: Դրանցից գուցե ավելի կարևոր նշանակություն ունի զորամասերի և ուսումնական հաստատությունների համագործակցությունը: Դպրոցում, միջին մասնագիտական հաստատություններում ամենաբարձր մակարդակով անցկացվող տեսական և գործնական պարապմունքները երբեք չեն կարող լիարժեք լինել առանց աշակերտների՝ զորամաս կատարվող թեկուզ կարճատև մեկ այցի. այստեղ վաղվա զինվորն իր աչքով է տեսնում, թե ինչ պայմաններում է իրականացվում զինվորական ծառայությունը, շփվում է իր սահմանադրական պարտքը կատարող երիտասարդի հետ, լսում նրա տպավորությունները, ծանոթանում հզոր մարտական տեխնիկային, սպառազինությանը: Բոլոր զինղեկներն էլ նշում են, որ այդպիսի յուրաքանչյուր այցից հետո աշակերտների առաջադիմությունը, սովորելու պատրաստակամությունը կտրուկ բարձրանում է: Այդ ամենը հաշվի առնելով՝ դեռ 1999թ. կառավարության ընդունած թիվ 532 որոշման պահանջների իրականացումը բարելավելու նպատակով 2011թ. պաշտպանության և կրթության ու գիտության նախարարները համատեղ հրաման արձակեցին, որով հստակեցվում են ՀՀ զինված ուժերի զորամասերի և ուսումնական հաստատությունների համագործակցության կարգը, նպատակներն ու եղանակները: Համատեղ հրաման արձակելն ինքնանպատակ չէր: Ինչպես հայտնի է, ՆԶՊ ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ համագործակցելով ՀՀ պաշտպանության նախարարության հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 օգոստոսի 1999 թվականի N 532 քաղ. Երևան օժանդակում է ուսումնական հաստատությունների ՆԶՊ-ի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

դ) հրատարակում է ՆԶՊ-ի քաղաքացիական պաշտպանության բաժնին վերաբերող գրքույկներ, այլ հանրամատչելի գրականություն, պատրաստում է դիաֆիլմեր, տեսաֆիլմեր, պլակատներ, այլ ուսումնական պարագաներ.

ե) գործնական պարապմունքների կազմակերպման նպատակով հատկացնում է ապաստարաններ, հակաճառագայթային թաքստոցներ.

զ) կազմակերպում և իրականացնում է զինղեկների վերապատրաստում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի գծով:

*(9-րդ կետը փոփ. 20.01.11 N 32-Ն)*

10. Հայաստանի Հանրապետության մարզպետները՝

ա) ապահովում են ուսումնական հաստատություններում ՆԶՊ-ի համար նախատեսված շինությունների կառուցումը, շահագործումը, պահպանման միջոցների հատկացումը.

բ) ապահովում են ուսումնական հաստատությունների աշակերտների ամենամյա ռազմադաշտային պարապմունքների, ռազմամարզական խաղերի կազմակերպումն ու վերահսկողությունը.

գ) իրականացնում են միջոցառումներ՝ ուսումնական հաստատությունների ՆԶՊ-ի դասարանների, փառքի սրահների ձևավորման, զենքի պահասեղակների կահավորման, ամրացման, ՆԶՊ-ի և քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով:

*(10-րդ կետը խմբ. 20.01.11 N 32-Ն)*

**\*\* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Ինչպես նշված է հրամանի մեջ, այն բանակ-կրթօջախներ համագործակցության հետագա սերտացման նպատակ ունի: Դա ներառում է սովորողների հետ ՆԶՊ ծրագրով նախատեսված դաշտային պարապմունքներ, մարտական փամփուշտներով հրաձգություն, ռազմահայրենասիրական խաղեր, մրցումներ և այլ միջոցառումների անցկացում, գորամասի առօրյայի, զինճառայողների կյանքի և կենցաղի հետ ծանոթացում և այլն:

Պլանով նախատեսված միջոցառումների անցկացման հիմնական պատասխանատուներն են գորամասի ԱՀՏԱ գծով հրամանատարի տեղակալը և զինղեկը: Առաջին հերթին նրանք կազմակերպում են փոխայցելություններ գորամաս և դպրոց: Բոլոր պետական տոներին, զինված ուժերի համար նշանակալի, ինչպես նաև սովորական օրերին գորամասի սպայակազմը այցելում է դպրոց, հանդիպումներ ունենում ուսուցչական կոլեկտիվի, աշակերտների հետ, մասնակցում տարբեր միջոցառումների: Սպաներն անցկացնում են «Արիության դասեր», ներկայացնում են մեր զինված ուժերի անցած ճանապարհը, պատմում հայրենիքի համար իրենց կյանքը տված հերոսների մասին: Հանդիպումներն առավել ոգևորիչ և արդյունավետ են լինում, երբ սպաների հետ միասին դպրոց են այցելում ծառայության ընթացքում իրենց լավագույնս դրսևորած պարտադիր ժամկետային

զինծառայողները: Հատկապես ավագ դպրոցի աշակերտներն իրենցից մեկ-երկու տարով մեծ տղաների խոսքն են լսում, նրանցից իմանում բանակային կյանքի առանձնահատկությունների մասին, ավելի ազատ շփվում, հետաքրքրվում զինվորական ծառայությամբ: Զինվորների այցերի քանակը ցանկալի կլիներ ավելացնել:

Հավաքակայան, պահակային ավան, գորանոցներ, ուսումնական կետ՝ հիմնականում այս փուլերով անցնելուց հետո աշակերտների հետ հրաձգարանում կամ մարտավարական պարապմունքների համար նախատեսված տարածքում դաշտային գործնական պարապմունքներ են անցկացնում: Ուսումնական նոնակի նետումը, ինքնաձիգի քանդում-հավաքումը և այլ գործողություններ կատարվում են նաև ժամկետային զինվորների հսկողությամբ, ինչը լրացուցիչ վստահություն է տալիս երեխաներին՝ մտածելով. «Եթե զինվորներն այդպես վարժվել են, ուրեմն՝ մենք էլ կկարողանանք արագ ընտելանալ զինվորական ծառայությանը»: Իհարկե, նման այցերի ամենասպասված պահը ավագ դասարանների աշակերտների համար մարտական փամփուշտներով հրաձգությունն է, ինչը կատարվում է նախապես ներկայացված հայտ-հաշվարկի հիման վրա:

Յուրաքանչյուր այդպիսի այցից հետո աշակերտները տպավորված վերադառնում են տուն: Առնվազն մի քանի օր նրանք իրենց շրջապատում պատմում են գորամասում տեսածի մասին, կարելի է ասել՝ նաև պարծենում են դրանով: Իսկ երբ զինդեկը հայտարարում է, որ հաջորդ անգամ գորամաս կմեկնեն ուսման և վարքի մեջ առաջադիմություն ունեցողները, իսկական մրցակցություն է սկսվում: Ինչպես նշում են ԱՀՏԱ գծով հրամանատարների տեղակալները, նմանատիպ այցերը չափազանց մեծ նշանակություն ունեն, առավել մեծ խթանիչ ուժ այդ տարիքի տղաների համար դժվար է պատկերացնել: Բացի այդ, նման կերպ հստակ երևում է տվյալ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության, նախնական զինվորական պատրաստության նկատմամբ ուսուցչական կոլեկտիվի, հատկապես զինդեկի վերաբերմունքը: Համապատասխանաբար ձեռնարկվում են անհրաժեշտ բացատրական քայլեր, հարկ եղած դեպքում զինդեկին մասնագիտական օգնություն է ցուցաբերվում:

Իհարկե, նման համագործակցությունը շատ օգտակար է և արդյունավետ: Տվյալ ոլորտում տարվող աշխատանքները հակիրճ ներկայացրինք, մինչդեռ իրականում այն պատասխանատու, մեծ ծավալի աշխատանք է ենթադրում:

Պարզից էլ պարզ է, որ աշակերտները ծանրաբեռնված են իրենց ընտրած հոսքից մասնագիտական գործունեությամբ: Լինելով ավագ դպրոցի աշակերտներ՝ նրանք նաև անակնկալ առաջադրանքներ,

լրացուցիչ հանձնարարություններ են ստանում: Որոշ դեպքերում պլանով նշված միջոցառումների օրերին նրանք մեկնում են գործուղում կամ մասնակցում են գորավարժությունների դիտում նշանավոր գորահրամանատարների հետ և այլն: Անկախ ամեն ինչից, ժամանակացույցից շեղումը կարող է թերացում դիտվել: Բացի այդ, որոշ գորամասերի կցված մի քանի կրթօջախներ իրարից զգալի հեռավորության վրա են, ինչը թե՛ ծախսի, թե՛ ժամանակի առումով նույնպես դժվարացնում է պատասխանատու սպայի գործը:

Ես ներկայացրի մի քանի առանցքային գործոններ, սակայն իրականում դրանք ավելի շատ են: Արդարության համար նշեմ, որ գորամասերում ԱՀՏԱ գծով հրամանատարների տեղակալները հիմնականում կարողանում են հաղթահարել բոլոր արգելքները և պատշաճորեն կատարել առաջադրված պարտավորությունները:

Ինչևէ, պարզից էլ պարզ է, որ տվյալ ոլորտը մեզ համար կենսական նշանակություն ունի: Պարզ է նաև, որ այն զարգանում է, և ինչպես ցանկացած զարգացող օղակ գերծ չէ որոշակի բացթողումներից ու թերություններից: Վստահաբար կարող ենք նշել, որ վերոնշյալ բացթողումները պակասելու միտում ունեն, ապա և՛ իսպառ շտկվելու: Մեր վստահության հիմքը ոլորտի հանդեպ տարեցտարի աճող ուշադրությունն է: Օրինակ՝ այս տարի արդեն հիմնական դպրոցն ավարտող աշակերտները փորձնական քննություն հանձնեցին ՆԶՊ առարկայից: Պարզապես իրավիճակն ամբողջովին շտկելու համար յուրաքանչյուրն իր տեղում պետք է առավելագույն նվիրումով իր գործը կատարի՝ ձգտելով անհրաժեշտ մասնագիտական, մեթոդական և այլ տիպի օգնություն ցույց տալ զինդեկներին, դպրոցների տնօրեններին, ինչու չէ, աջակցել նաև դպրոցին:

### **ՆԶՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ\*\***

ՆԶՊ և հարակաից առարկաների հմտության և տրամաբանության բուժ սպասարկման դասաժամերին գերծ մնալ կոնֆլիկտներից, որպեսզի թեման լավ ավարտ ունենա:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել [«Նախնական գինվորական պատրաստություն» առարկայի 8-12-րդ դասարանների չափորոշյի նախագիծը](#): Չափորոշում կատարված որակական փոփոխությունները պայմանավորված են ինչպես ռազմագիտության ոլորտում տեղի ունեցած զարգացումներով, համաշխարհային և տարածաշրջանային իրավիճակով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ



կազմակերպման անհրաժեշտությամբ՝ անհատականից դեպի խմբային (ջոկային) պատրաստվածություն: ՆՁՊ առարկայի ուսուցումը հավասարապես նախատեսված է թե՛ տղաների, թե՛ աղջիկների համար:

